Դեկտեմբեր 2

### Իվան Վիրիպաևի համանուն պիեսի մոտիվներով «Թթվածին»

**Դերակատար**՝ Դավիթ Աբրահամյան
**Բեմադրիչ**՝ Նաղեժդա Իսրաելյան



Ներկայացումը բեմադրվել է OPEN STAGE թատերախմբի շրջանակներում:

Սաշան երիտասարդ է, որը ապրում է 21-րդ դարում: Բարձրաձայնելով իր մտորումները, փորձում է գտնել մի շարք երևույթների և իրադարձությունների բացատրություններ: Իսկ ինչն է այն, ինչ նա փնտրում է ...

18:00 Տևողությունը՝ 30 րոպե
Զոլում և Մուշեղ Գրիգորյանների արվեստանոց

Դեկտեմբեր 10

### Ժ. Անույ «Ժաննա դ'Արկ»

**Դերակատար**՝ Ռուզաննա Պողոսյան
**Բեմադրությունը և երաժշտական ձևավորումը՝ թատրոնի գլխավոր ռեժիսոր** Արմեն Սաֆարյանի



Ներկայացումը Ժաննա անունով մի աղջկա կյանքի մասին է, որտեղ հիմնական գաղափարը՝ հայրենասիրությունն ու հավատարմությունն է, թե ինչպես, այդ երիտասարդ աղջիկը անհասկանալի մղումով հետպատերազմյան անորոշության և լքված երազի ազդեցությամբ հրաժարվում է ամեն ինչից և մղվում հայրենանվեր գործի:

Անսահման սերը հայրենիքի հանդեպ և մոգական հատկությունները նրան համոզում են, որ ինքը պիտի փրկի Ֆրանսիան: Նա իր ձեռքն է վերցնում հայրենիքի ազատագրման դժվար գործը, հաղթահարելով ճանապարհին հանդիպած բոլոր խոչընդոտները, կռվում և մեռնում է հանուն հայրենիքի:

17:00 Տևողությունը՝ 45 րոպե
ՀԹԳՄ

### Ըստ Վ. Շեքսպիրի «Լեդի Մակբեթ» (Արմմոնո-Տրիումֆ)

**Դերակատար**՝ Նորա Բադալյան
**Բեմադրիչ**՝ Հրաչյա Ղազարյան
**Ինսպալյացիան**՝ Նորա Բադալյանի
**Երաժշտական ինսպալյացիան**՝ Ստեփան Վերանյանի



Արվեստագետի և «Մակբեթ»-ի հերոսների իդենտիֆիկացիա /նույնացում/, որտեղ հնարավոր չէ գտնել իրականի և պայմանականի սահմանը

Կոնցեպցիան՝ պրոցես, պատահականություն:
Նպատակը՝ խաղ:

19:00 Տևողությունը՝ 40 րոպե
Վայրը՝ Զոլում և Մուշեղ Գրիգորյանների արվեստանոց

ԱՐՄՈՆՈ Plus 2018

**Շնորհակալություն**՝

ՀՀ Մշակույթի նախարարությանը
Հայաստանի թատերական գործիչների միությանը
Փոքր թատրոնին
Լոֆտին
Հովհ. Թումանյանի տուն-թանգարանին
Զոլում և Մուշեղ Գրիգորյանների արվեստանոցին
ԼատինԱրտ պարային ստուդիային

**Աշխատակազմ**՝
**Տնօրեն**՝ Մարիաննա Մխիթարյան
**Մամուլի պատասխանատու**՝ Վլադ Մուրադյան
**Գլխավոր համակարգող**՝ Լիլիթ Մնացականյան
**Ադմինիստրատոր**՝ Վլադ Նազարյան
**Երիտասարդական ծրագրերի համակարգող**՝
Գալուստ Ներսիսյան
**Դիզայներ**՝ Մերի Մանուկյան

Գործընկերներ՝

AFINA acoustics LatinArt

Ինֆորմացիոն գործընկերներ՝

Իրավունք oritasard.am

ՀՀ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

# ԱՐՄՈՆՈ Plus 2018
## թատերական փառատոն

Նոյեմբեր 19 – Դեկտեմբեր 10

# ԱՐՄՄՈՆՈ Plus 2018

**Նոյեմբեր 19**

Հանդիպում Հայաստանի սպորտային պարերի բազմակի չեմպիոն ու մրցանակակիր **Արտակ Զախարյանի** հետ:



***Թեմա՝***
***Շարժվի՛ր ռիթմով:***

15:00
ԼատինԱրտ պարային ստուդիա

**Նոյեմբեր 23**

## «Ուղղակի Ֆրիդա»
## Դրամա 1 գործողությամբ 18+

**Դերակատար**՝ Վալենտինա Դավիթավյան
**Նկարիչ**՝ Ժաննա Հովհաննիսյան
**Բեմադրիչ**՝ Գալուստ Ներսիսյան



Ներկայացման հիմքում ընկած է հայտնի նկարչուհի՝ Ֆրիդա Կալոյի կյանքն ու ստեղծագործական ուղին: Ներկայացումն ունի համամարդկային բնույթ: Այն լուծվում է ծանր հոգեբանական հանգույցներով:

20:00 Տևողությունը՝ 50 րոպե
Լոֆտ

**Նոյեմբեր 24**

## Արմմոնոն՝ Լոֆտում

Հանդիպում հոգեբան **Եվա Օհանյանի** հետ:



Թեմա՝
***Թատրոնը հոգեբանի աչքերով:***

13:00
Լոֆտ

Հանդիպում բեմանկարիչ **Վիկտորիա Ռիեռո Հովհաննիսյանի** հետ (Հայաստան-Շվեյցարիա):



Թեմա՝
***Խոսենք բեմանկարչի աշխարհի մասին:***

15:00
Լոֆտ

Հանդիպում ՀՀ վաստ. արտիստ **Նարինե Գրիգորյանի** հետ:



Թեմա՝
***Խաղում ենք մոնոներկայացում:***

17:00
Լոֆտ

**Նոյեմբեր 25**

## Դարիո Ֆո
## «Ես սպասում եմ քեզ սիրելիս»

**Դերակատար**՝ Աքսաննա Բաբաջանյան
**Բեմադրությունը, նկարչական ձևավորումը**՝ Ասյա Սիրեկանյանի



Մարիան ամուսնացած է, ունի ընտանիք, սակայն իրեն երջանիկ չի համարում, քանի որ ընտանիքում միայն պարտականություններն են կարևորվում, իսկ նա սիրո և ուշադրության կարիք ունի

16:00 Տևողությունը՝ 50 րոպե
Փոքր թատրոնի բեմում

## Ըստ Ֆ. Դոստոևսկու «Ապուշը» վեպի «Նաստասիայի դերում իշխան Լև Նիկոլաևիչ Միշկին» (Արմմոնո-Տրիումֆ)

**Դերակատար**՝ Արմեն Քուշկյան
**Բեմադրիչ**՝ ՀՀ Ժող. արտիստ Վահե Շահվերդյան



«Սիրտ ունեցող, բայց անխելք կինն էլ է դժբախտ, խելացի, բայց անսիրտ կինն էլ է դժբախտ: Հին ճշմարտություն է: Ահա ես սիրտ ունեցող անխելք կին եմ, իսկ դու խելացի անսիրտ կին ես. և մենք երկուսս էլ դժբախտ ենք, երկուսս էլ տառապում ենք…»:

18:00 Տևողությունը՝ 45 րոպե
ՀԹԳՄ

## Վ. Շեքսպիրի «Համլետ» ողբերգության և Հ. Մյուլլերի «ՀամլետMachine» աբսուրդային պիեսի մոտիվներով «ՀամլետMachin» (Արմմոնո-Տրիումֆ)

**Դերակատար**՝ Նարեկ Բաղդասարյան
**Բեմադրիչ**՝ Արթուր Մակարյան
**Պարերը**՝ Անի Աբրահամյանի
**Կոմպոզիտոր և ձայնային ռեժիսոր**՝ Աշոտ Պետրոսյան
**Զգեստների և դեկորների դիզայներ**՝ Հայարփի Խաչատրյան

Ներկայացման նպատակն է բացահայտել Համլետի դերը մեր օրերում և պարզել՝ արդյո՞ք այն դրաման, որը նա կրում էր 16-րդ դարում, դեռևս գոյություն ունի այսօր՝ մեր իրականության մեջ: Այս նոր Համլետը պայքարում է արյան թշնամանքի դեմ՝ ձգտելով գտնել նոր լուծումներ, որպես սպանելու կամ սպանվելու այլընտրանք:



19:30 Տևողությունը՝ 45 րոպե
Փոքր թատրոնի բեմում

**Նոյեմբեր 27**

## Դարիո Ֆո, Ֆրանքա Ռամե «Սովորական օր» (Արմմոնո-Տրիումֆ)

**Դերակատար**՝ Տաթև Ղազարյան
**Բեմադրիչ**՝ Սերժ Մելիք-Հովսեփյան



Ներկայացումը նվիրված է մի կնոջ կյանքից մեկ օրվա պատմությանը, որը գտնվում է ինքնասպանություն կատարելու եզրին: Տարօրինակ, երբեմն զավեշտալի հանգամանքները հաջորդում են միմյանց՝ անընդմեջ խանգարելով կնոջ մտադրության իրականացմանը:

19:30 Տևողությունը՝ 50 րոպե
Լոֆտ

**Նոյեմբեր 30**

## Ըստ Հովհ. Թումանյանի «Անուշ» պոեմի և Ա. Տիգրանյանի «Անուշ» օպերայի «Համբարձման գիշեր» (Արմմոնո-Օպերա) Մոնոօպերա Ֆանտազիա

**Սցենարային մշակումը, բեմադրությունը**՝ Արսեն Ղազարյանի
**Դերակատար**՝ Հասմիկ Հարությունյան (սոպրանո)



Աստվածատուր, երկնառաք սերն եղել և մնում է անմահ, ցավոք այն, երբեմն, անընկալելի է և դատապարտված երկրային գրված և չգրված օրենքներով…

18:00 Տևողությունը՝ 40 րոպե
Հովհ. Թումանյանի տուն-թանգարան